


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ



ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ (DIGEST)

N1 (15) 2009 թ. դեկտեմբերի 21 - 2010 թ. հունվարի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ



9 փետրվարի 2010թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ 2

1.1 Օրենք -----	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ -----	3
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ -----	5

2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ 8

2.1 Ծրագրեր և կատարողականություն -----	8
2.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների-----	8
2.3 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում -----	8
2.4 Հետադարձ կապ մամուլի արձագանքների և «թեժ գծի» վերլուծություն -----	9
2.5 Հարկային և մաքսային թվերի համառոտագիր -----	10

1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Օրենքներ

Փաստաթուղթ	«Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	10 դեկտեմբերի 2009թ, ՀՕ-229-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68(734), 30.12.2009թ.
Ուժի մեջ է	09.01.2010թ.

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ վերանայվել են խոշոր կազմակերպություն համարվելու ցուցանիշները: Սույն օրենքի իմաստով խոշոր կազմակերպություն է համարվում այն կազմակերպությունը, որը բավարարում է հետևյալ ցուցանիշներից առնվազն մեկին՝

ա) հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) գործունեությունից հասույթը գերազանցում է մեկ միլիարդ դրամը (500 հազար դրամի փոխարեն),

բ) հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ ակտիվներ

րի հաշվեկշռային արժեքը գերազանցում է մեկ միլիարդ դրամը (500 հազար դրամի փոխարեն),

ընդ որում վերոնշյալ դրույթները վերաբերում են 2010 թվականի և դրանից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների ցուցանիշներին:

Օրենքում կատարված լրացմամբ նախատեսվում է, որ այն կազմակերպությունները, որոնց 2009 թվականի գործունեությունից հասույթը գերազանցում է մեկ միլիարդ դրամը, պարտավոր են իրենց 2009 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրատարակել մինչև 2010 թվականի հուլիսի 1-ը:

Փաստաթուղթ	«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	10 դեկտեմբերի 2009թ, ՀՕ-224-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68(734), 30.12.2009թ.
Ուժի մեջ է	01.01.2010թ.

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ 07.07.2000թ. ՀՕ-79 օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասում «ԱՏԳ ԱԱ 2207 և 2208 ապրանքախմբի ծած-

կագրերին» բառերը փոխարինվել են «ԱՏԳ ԱԱ 2207 ապրանքախմբի ծածկագրին դասվող՝ շշալցված ապրաքների և 2208 ապրանքախմբի ծածկագրին» բառերով:

1.2 | ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հարկային մարմնի կողմից ռիսկային չափանիշների հիման վրա պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգը կիրառելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	17 դեկտեմբերի 2009թ, N1487-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68(734), 30.12.2009թ.
Ուժի մեջ է	01.10.2010թ.

Համառոտ նկարագիր

Սույն որոշմամբ հաստատվում է հարկային մարմնի կողմից ռիսկային չափանիշների հիման վրա պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի կիրառման կարգը, որով սահմանվում են հարկային մարմնի կողմից ռիսկային չափանիշների հիման վրա «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով կարգավորվող միայն պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգը (այսուհետ՝ ՌՉՍՀ) և դրա կիրառման ընդհանուր հարցերը:

Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրությունն իրականացվում է հարկման արդարության, հարկային օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվության կիրառման անխուսափելիության, ստուգման ենթակա հարկ վճարողների հավասարության, ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության արդարության, ռիսկային չափանիշների սահմանման, ստուգման ենթակա հարկ վճարողների ցանկերի ձևավորման գաղտնիության, փոքր հարկ վճարողների նկատմամբ ընտրանքի առանձնահատուկ մոտեցման սկզբունքների հիման վրա:

Նշված կարգի իմաստով փոքր հարկ վճարողներ են համարվում նախորդ օրացու-

ցային տարում 100 մլն դրամ տարեկան հասույթի մեծությունը չգերազանցող հարկ վճարողները: Սույն կարգի իմաստով ռիսկային չափանիշը բնութագրիչ է, որը բացահայտում է հարկային օրենսդրության խախտմամբ հարկերի հաշվարկման և (կամ) հարկերից խուսափելու հնարավոր ռիսկերը:

Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման ենթակա հարկ վճարողների ցանկը ձևավորվում է հետևյալ եղանակներով՝

1. Ռիսկային չափանիշների հիման վրա համակարգչային ծրագրի միջոցով ընտրանք (այսուհետ՝ ՌՉԸՀԾ),
2. պատահականության հիման վրա համակարգչային ծրագրի միջոցով ընտրանք (այսուհետ՝ ՊԸՀԾ),
3. հարկային մարմնի ղեկավարի նախաձեռնությամբ ընտրանք՝ օպերատիվ-հետախուզական, քննչական, հետաքննչական գործողությունների, իրավապահ մարմիններից ստացված տեղեկությունների, ինչպես նաև ստորաբաժանումների ղեկավարների ներկայացրած հարկային իրավախախտումների ու չհարկվող շրջանառությունների վերաբերյալ ստուգումների հիմնավորված զեկուցագրերի, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերի հիման վրա:

ՌԶՍՀ-ի շրջանակներում ընտրանքն իրականացվում է հետևյալ հաջորդական քայլերի միջոցով՝

1. ՌԶՍՀ-ի միջոցով հարկ վճարողները սանդղակավորվում են ըստ ռիսկայնության աստիճանի: Ռիսկայնության աստիճանը որոշվում է ռիսկային չափանիշներին տրված կշիռների հիման վրա ձևավորված բալային միավորների հանրագումարով: Ըստ ռիսկայնության աստիճանի նվազման՝ ռիսկերի բալային միավորները դասակարգվում են՝ բարձր ռիսկայնության գոտի, միջին ռիսկայնության գոտի, ցածր ռիսկայնության գոտի միջակայքերում:
2. ՊԸՅԾ-ի միջոցով պատահականության սկզբունքով ստուգման ենթակա հարկ վճարողներն ընտրվում են միջին և ցածր ռիսկայնության գոտիներում գտնվող հարկ վճարողների թվից՝ այդ թվի մինչև 0.5 տոկոսի չափով:

ՌԶՍՀ-ի ստուգման ենթակա հարկ վճարողների ցանկում ընդգրկվում են սույն կարգի համաձայն սահմանվող բարձր ռիսկայնության գոտում հայտնված հարկ վճարողները, իսկ ՌԶՍՀ-ով ստուգման ենթակա չեն սույն կարգով սահմանվող ցածր ռիսկայնության գոտում հայտնված հարկ վճարողները:



Փաստաթուղթ	«Եվրոպական Միությունում և Համաշխարհային մաքսային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մաքսային կցորդի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	17 դեկտեմբերի 2009թ, N 1491-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68(734), 30.12.2009թ.
Ուժի մեջ է	31.12.2009թ.

Համառոտ նկարագիր

Սույն որոշմամբ ՀՀ կառավարությունը որոշում է Բելգիայի Թագավորությունում ՀՀ դեսպանությանը կից ստեղծել Եվրոպական Միությունում և Համաշխարհային մաքսային կազմակերպությունում ՀՀ մաքսային

կցորդի հաստիք: Որոշմամբ հաստատվում է Եվրոպական Միությունում և Համաշխարհային մաքսային կազմակերպությունում ՀՀ մաքսային կցորդի կանոնադրությունը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 12-ի N 268-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում»
Ամսաթիվը և համարը	24 դեկտեմբերի 2009թ, N 1497-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (734) 30.12.2009թ.
Ուժի մեջ է	09.01.2010թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում է, որ ՀՀ ավիափոխադրողները և օդանավակայան շահագործող կազմակերպությունները սույն որոշմամբ հաստատված ձևով յուրաքանչյուր շաբաթվա համար մինչև հաջորդող շաբաթվա երրորդ աշխատանքային օրը փաստաթղթային տեսքով կամ էլեկտրոնային եղանակով («Microsoft Excel» համակարգ-

չային ծրագրի ձևաչափով) ՀՀ ԿԱ ՊԵԿ են ներկայացնում տեղեկություններ այդ շաբաթվա ընթացքում ՀՀ-ից մեկնած ուղևորների թվի, այդ թվում՝ պետական տուրքի արտոնություններից օգտվողների և կանխիկ գանձման անդորրագրերով մեկնողների մասին՝ յուրաքանչյուր օրվա դրությամբ ըստ առանձին ավիափոխադրողների:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 12-ի N268-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում»
Ամսաթիվը և համարը	24 դեկտեմբերի 2009թ, N 1499-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68(734), 30.12.2009թ.
Ուժի մեջ է	09.01.2010թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում է, որ այն դեպքերում, երբ ավիափոխադրումներն իրականացվում են օտարերկրյա ավիափոխադրողների կողմից, որոնք Հայաստանի Հանրապետությունում ունեն ներկայացուցիչներ, սակայն տվյալ երկրի օրենսդրությանը համաձայն այդ կազմակերպությունների ներկայացուցիչներն իրավասու չեն իրականացնելու գանձված պետական տուրքի գումարների վճարում ՀՀ պետական բյուջե, դրանց կող-

մից գանձված պետական տուրքի գումարները հաշվարկվում և ՀՀ պետական բյուջե են փոխանցվում օդանավակայան շահագործող կազմակերպությունների կողմից, որոնք պետական տուրքի գումարները հաշվարկում և ՀՀ պետական բյուջե են փոխանցում փաստացի թռիչքի օրվան հաջորդող 10 բանկային օրվա ընթացքում՝ անկախ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպություններից փոխանցումների ստացումից:

1.3 | Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների, սահմանային չափի ցուցանիշների մասին հայտարարության ձևերը և դրանց լրացման կարգերը հաստատելու, հարկային մարմնի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման»
Ամսաթիվը և համարը	02 դեկտեմբերի 2009թ, N3660-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 34(352), 30.12.2009թ.
Ուժի մեջ է	30.12.2009թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվում են հաստատագրված վճարով հարկման ենթակա գործու- նեության տեսակների համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետա-

յին տվյալների և ուղղիչ գործակիցների մասին հայտարարության ձևերն ու լրացման կարգերը:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի գումարները օրենքով սահմանված դեպքում արտադրության և շրջանառության ծախսերին վերագրելու կարգի մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	17 դեկտեմբերի 2009թ, N10
Յրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 34(352), 30.12.2009թ.
Ուժի մեջ է	30.12.2009թ.

Համառոտ նկարագիր

Ըստ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի նախավերջին պարբերության՝ «օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան՝ ԱԱՀ վճարող համարվելուց դադարած անձանց մոտ ԱԱՀ վճարող չհամարվելու օրացուցային տարվա հունվարի 1-ի դրությամբ առկա ԱԱՀ-ի դեբետային մնացորդը (առանց գերավճարի և գերավճարից տարբերվող գումարի) ենթակա չէ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ու վերագրվում է արտադրության և շրջանառության ծախսերին»:

ԱԱՀ-ի դեբետային մնացորդում ԱԱՀ-ի գերավճարի կամ գերավճարից տարբերվող գումարի ու օրենքի 23-րդ հոդվածի նախավերջին պարբերության համաձայն արտադրության և շրջանառության ծախսերին վերագրման ենթակա ԱԱՀ-ի գումարի մեծությունները հարկ վճարողը որոշում է ինքնուրույն: Արտադրության և շրջանառության ծախսերին վերագրվող ԱԱՀ-ի գումարի մեծության մասին հարկ վճարողը կարող է տեղեկացնել հարկային մարմնին՝ ներկայացնելով համապատասխան բովանդակությամբ գրություն:

Հարկ վճարողը կարող է հարկային մարմնի հետ ճշտել ԱԱՀ-ի դեբետային մնացորդում ԱԱՀ-ի գերավճարի կամ գերավճարից տարբերվող գումարի, արտադրության և շրջանառության ծախսերին վերագրման ենթակա գումարի մեծությունները՝ հարկային մարմնի հետ կազմելով հաշվարկների փոխադարձ ստուգման ակտ:

Հարկային մարմնից հարկ վճարողից ստացված՝ արտադրության և շրջանառության ծախսերին վերագրվող ԱԱՀ-ի գումարի մե-

ծության մասին հարկ վճարողից ստացած գրության և (կամ) արտադրության և շրջանառության ծախսերին վերագրվող գումարի մեծությունը որոշելու նպատակով կազմված՝ հաշվարկների փոխադարձ ստուգման ակտի հիման վրա, հարկային մարմնում վարվող՝ հարկ վճարողի ԱԱՀ-ի անձնական հաշվի քարտում կատարում է ԱԱՀ-ի դեբետային մնացորդի նվազեցում՝ արտադրության և շրջանառության ծախսերի վերականգնման ենթակա գումարի չափով:

Հարկ վճարողի կողմից արտադրության և շրջանառության ծախսերին վերագրվող գումարի մեծության վերաբերյալ գրություն չներկայացվելու և (կամ) արտադրության և շրջանառության ծախսերին վերագրվող գումարի մեծությունը որոշելու նպատակով հաշվարկների փոխադարձ ստուգման ակտ չկազմելու դեպքերում արտադրության և շրջանառության ծախսերին վերագրվող գումարի մեծությունը որոշվում է պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության կամ հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի ստուգման ընթացքում: Հարկային մարմնում վարվող՝ հարկ վճարողի ԱԱՀ-ի անձնական հաշվի



քարտուրմ ԱԱԶ-ի դեբետային մնացորդի նվազեցում կատարվում է հարկ վճարողի դիմումի (գրույթան), հաշվարկների փոխադարձ ստուգման ակտի կամ ստուգման ակտի հիման վրա՝ որպես նվազեցման հիմք նշելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը:

Եթե հարկ վճարողը օրենքին համապատասխան պարտավոր էր կատարել ԱԱԶ-ի դեբետային մնացորդի (առանց գերավճարի և գերավճարից տարբերվող գումարների) նվազեցում, սակայն այդ մնացորդի հաշվին մարվել են այլ հարկային պարտավորություններ, ապա ստուգմամբ այդ փաստը արձանագրվելու դեպքում մարված պարտավորությունները ենթակա են վերականգնման:

Սույն մասում նշված փաստը արձանագրվելու դեպքում հաշվարկվում (վերահաշվարկվում) են հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների գծով ապառքների նկատմամբ չհաշվարկված (վերահաշվարկված) տույժերը:

ԱԱՀ վճարող համարվելուց դադարած անձի մոտ արտադրության և շրջանառության ծախսերին վերագրված ԱԱՀ-ի այն գումարները (կամ դրանց մասը), որոնք առաջացել են վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների մասով և հետագայում կվերաբերեն ԱԱՀ վճարող համարվելու պահի դրությամբ առկա դեբետային մնացորդին՝ կհամարվեն որպես նախկինում չհաշվանցված ԱԱՀ-ի գումարներ:

Փաստաթուղթ	«Առանձին հարկ վճարողների 2009 թվականի շահութահարկի և եկամտահարկի տարեկան հաշվարկների լրացման վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	14 դեկտեմբերի 2009թ, N9
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N9 33(351), 21.12.2009թ.
Ուժի մեջ է	21.12.2009թ.

Համառոտ նկարագիր

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 76-րդ և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 31.2-րդ հոդվածներում նշված դրույթներից ելնելով՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ 30.09.2009թ. «ՀՀ ԿԱ ՀՊԾ 2004 թվականի ապրիլի 2-ի N1-05/7-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N2682-Ն հրամանով հաստատված «Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի հավելվածով սահմանված շահութահարկի պարզեցված հաշվարկի ու ՀՀ կառավարության 09.07.2009թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի N1038-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N766-Ն որոշմամբ հաստատված ֆիզիկական անձի տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկի լրացման վերաբերյալ պարզաբանվում է, որ

կերպությունները 2009թ. շահութահարկի պարզեցված հաշվարկի 0600 տողում նշում են հաշվարկի 0500 տողի և 20%-ի արտադրյալը՝ համախառն եկամտի 2%-ի և 10%-ի սահմաններում, գումարած 2009 թվականին ավարտված ստուգումներով լրացուցիչ հայտնաբերված՝ նախորդ տարիներին վերաբերող շահութահարկի գումարները (տող 0600Ա):

1. | 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված կազմա-

2. | 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված անհատ ձեռնարկատերերը 2009 թվականի եկամտահարկի պարզեցված հաշվարկի [32] տողում նշում են հաշվարկի տարվա համար հաշվարկված եկամտահարկի հանրագումարը (տող[13] + տող[23] + տող[31])՝ տվյալ տարվա համախառն եկամտի (տող[1] + տող[9]/սյունակ[6] + տող[10]/սյունակ[6] + տող[11]/սյունակ[6] + տող[12]/սյունակ[6]) + տող[14] + տող[18]/I...XII) 2%-ի և 10%-ի սահմաններում:

2. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

2.1 | Ծրագրեր և կատարողականություն

2.1.1 | Ծրագրեր և կատարողականություն /մաքսային ծառայության մասով/

ՀՀ-ում Եվրամիության խորհրդատվական խմբի կողմից ուսումնասիրություն է իրականացվել ՀՀ մաքսային ծառայության կողմից կոռուպցիայի դեմ պայքարում իրականացված միջոցառումների ոլորտում, ինչի արդյունքում ներկայացվել են համապատասխան առաջարկություններ: Ներկայացված առաջարկների հիման վրա մշակվել է մաքսային մարմինների հակակոռուպցիոն գործողությունների 2010-2011 թվականների

ծրագրի նախագիծ: Ծրագրում ներառված են 15 միջոցառումներ, որոնցով նախատեսվում են բարեփոխումներ իրականացնել ինչպես մաքսային վարչարարության, այնպես էլ մաքսային օրենսդրության ոլորտներում: Յուրաքանչյուր միջոցառում ունի հստակ կատարողականի ցուցանիշներ, սահմանված են հստակ վերջնաժամկետներ և պատասխանատու ստորաբաժանումներ:



2.2 | Ավևարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

20.12.2009թ-ից մինչև 20.01.2010թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են թվով 1 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 10 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 20.12.2009թ-ից մինչև 20.01.2010թ-ը քննարկվել է թվով 6 բողոք, որից՝

բավարարվել է 3 բողոք,

բավարարվել է մասնակի 1 բողոք,

մերժվել է 2 բողոք:

2.3 | Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում

2.3.1 | Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային ծառայության մասով/

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2010թ. հունվարի 19-ի N10-Ա հրամանի համաձայն ս.թ. փետրվարի 25-ից ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում սկսվելու

է հարկային ծառայողների ատեստավորման գործընթացը:

2.4 | Զեռադարձ կապ մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն

2.4.1 | Զեռադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն /հարկային ծառայության մասով/

2009թ. դեկտեմբերի 21-ից 2010թ. հունվարի 20-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԾ «Թեժ գծով» ստացվել է 46 բողոք և առաջարկություն:

Բողոքների հիմնական մասը վերաբերել է պարզաբանության տրամադրման նոր կարգին, պայմաններին, ժամկետներին, հունվարի վիճակահանության շահող թվերին և շահումների տրամադրման կարգին, ինչպես նաև վիճակահանությանն առնչվող բազմաթիվ այլ հարցերի:

Առաջարկությունները հիմնականում վերա-

բերել են պարզաբանության տրամադրման նոր կարգին և պայմաններին: Բողոքների մի մասն էլ առնչվել է «Հսկիչ-դրամարկային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման փաստերին: Հարցերի մի ստվար խումբ էլ վերաբերել է էլեկտրոնային հաշվետվություններին և հարկային օրենսդրությանը: Մասնագիտական պարզաբանումներ ստանալու համար քաղաքացիներին տրամադրվել են ՏՀՏ-ների համապատասխան բաժինների հեռախոսահամարները:



2.4.2 | Զեռադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն /մաքսային ծառայության մասով/

2009թ. դեկտեմբերի 21-ից 2010թ. հունվարի 20-ը դիմած քաղաքացիների գերակշիռ մասը խնդրել է տրամադրել մաքսային մարմինների գործունեության և մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված տեղեկատվություն կամ խորհրդատվության կարիք է ունեցել: Արձանագրվել է մեկ բողոք, որը վերաբերել է արտերկրից ուղարկված ծանրոցի մաքսագերծման հետ կապված խնդիրներին: Բողոքին արձագանքվել է:

Կախված անհրաժեշտությունից՝ քաղաքացուն կամ զանգահարել և պարզաբանում են տվել հուզող հարցերի առնչությամբ, կամ էլ հրավիրել են ՊԵԿ մաքսային ծառայության համապատասխան ստորաբաժանում՝ հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելու և տեղում անհրաժեշտ պարզաբանումներ տալու նպատակով:

2009թ. դեկտեմբերի 21-ից 2010թ. հունվարի 20-ը «Թեժ գծով» օրական արձանագրվել է միջինը 10-15 զանգ:

2.5 | Զարկային և մաքսային թվերի համառոտագիր

2.5.1 | Զարկային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2009 թվական		
		դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	Աճը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-դեկտեմբեր) %
1	2	3	4	5
1	Հաշվառված՝ ԶՎՀՅ ստացած հարկ վճարողներ (թվաքանակ)	1085	15.692.0	69.5
2	Զարկային մարմնի կողմից պետ. բյուջե հավաքագրված եկամուտներ (մլն. դրամ), այդ թվում՝	37419.62	395.581.1	91.5
2.1	ԱԱՀ	7211.821	83.268.5	79.3
2.2	Շահութահարկ	5680.36	80.800.5	93.7
2.3	Ակցիզային հարկ	911.26	6.294.6	94.9
2.4	Եկամտահարկ	7278.975	60.204.7	112.0
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	10392.03	102.903.1	97.9
2.6	Այլ	5945.17	62.108.8	89.1
3	Զարկային մարմնի կողմից կատարված ստուգումներ (հատ)	1641	26.391.0	170.1
4	Զարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	3234.1	33.257.9	78.5

2.5.2 | Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2008թ.		2009թ.		Աճը նախորդ տարվա նկատմամբ %	
		Հունվար-դեկտեմբեր	դեկտեմբեր	Հունվար-դեկտեմբեր	դեկտեմբեր	Հունվար-դեկտեմբեր	դեկտեմբեր
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ)	287 852	21 589	228 201	23 185	79.3	107.4
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	1 691 090	149 528	1 498 811	165 597	88.6	110.7
2.1	արտահանում (մլն դրամ)	324 094	18 838	282 398	28 321	87.1	150.3
2.2	ներմուծում (մլն դրամ)	1 366 995	130 690	1 216 413	137 277	89.0	105.0
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	35 287	5 641	23 176	3 875	65.7	68.7

**բոլոր հարցերն
ունեն իրենց
պատասխանները՝**

www.taxservice.am

բոլոր հարցերն
ունեն իրենց
պատասխանները՝

www.customs.am